

## Հասկնալ Հեռախօսի Ամսավճարի Կտրոնի Պարունակությունը

Հեռախօսի ամսավճարի կտրոնները շատ մանրամասնություններ կը պարունակեն եւ կրնան դժուար հասկնալի ըլլալ: Ի՞նչ տեսակի ծառայություն ալ ունենաս միշտ յիշէ:-

- Իրաւունքդ է հասկնալ կտրոնը:
- Եթէ բան մը կայ որ չես հասկնար՝ ընկերութեանդ հեռաձայնէ եւ բացատրություն ուզէ:



Հեռաձայնէլ ատաջ կարգայ  
այս թոուցիկը: կրնայ ըլլալ որ  
ան պարունակէ ունեցած  
հարցումներուդ



Եթէ հեռախօսի ընկերութեանդ հետ հարցի մը կամ ալ վիճելի վճարում մը լուծելու գծով օժանդակութեան պէտք ունիք՝ նախ պէտք է կապուիք ընկերութեան հետ: Եթէ ձեր հարցը չէ լուծուած, կրնաք գանգատ ներկայացնել անլայն՝ [www.calphoneinfo.com](http://www.calphoneinfo.com), կամ հեռաձայնել Սպարողների Հարցերու Մասնաճիւղ եւ Հանրային Սպասարկման Խարդախություն (Consumer Affairs Branch and Utility Fraud Hotline) -ի գծով՝ **1(800) 649-7570**



CPUC

Understanding Your Phone Bill - May 2012—Armenian

## Հասկնալ Հեռախօսի Ամսավճարի Կտրոնը Պարունակությունը

CALIFORNIA  
PUBLIC  
UTILITIES  
COMMISSION





## Հեռաձայնի Ամսավճարի Կտրօնը Ի՞նչ կը Պարունակէ

- Նախորդ ամսավճարի պարագաները եւ վճարումները եւ նոր ամսավճարի վճարման թուականը.
- Ընկերութեան տուեալները որ կը նշէ ինչպէ՛ս կապ հաստատել
- CPUC եւ FCC տուեալները եւ ինչպէ՛ս կապ հաստատել անոնց հետ եթէ ընկերութեանդ հետ հարց ունիս. .
- Ծառայութեան ծրագիրները ուր կը գտնես ծառայութեանդ մանրամասնութիւններն ու անոնց ծախսերը :
- Վճարման կտրոն, զոր պէտք է դրկեն վճարումիդ հետ.
- Այլ ընկերութիւններէ՝ օրինակ եթէ հեռաւոր խօսակցութեան ընկերութիւնդ զատ է անոր ծախսերը: Բոլոր ծախսերուն դիմաց պիտի տեսնես ստացող ընկերութեան անունը.

# Հասկնալ Հեռախօսի Ամսավճարը

## Յաւելեալ Ծախսեր

Կտրօնը նաեւ կը ներառէ յաւելեալ ծախսերը՝ ինչպէս օրինակ:- :

- Ծառայութեան սկսման կամ փոփոխութեան ծախս (մէկ անգամուան համար). .
- Ծախսեր, տուրքեր, եւն. Որոնք կը հաւաքուին բոլոր ընկերութիւններու կողմէ:
- Թիւ խնդրելու ծախս, որ կ'ընդգրկէ ("411") կանչելու ծախսերը.
- Հեռախօսային քարտերու ծախս (կարգ մը ընկերութիւններ նման քարտեր կու տան իրենց յաճախորդներուն, որպէսզի գործածեն տունէն դուրս այլ հեռաձայններ գործածելու: Այս խօսակցութեանց ծախսը աւելի է քան տունէն խօսիլը). phone.
- Յաւելեալ ռոպէներու ծախս: Եթէ ռոպէներու քանակը ճշդուած է եւ դուն անոնցմէ աւելի գործածես.

## Ընտրէ Կարեւոր Ծառայութիւններ

Հեռախօսի ընկերութիւնները յաճախ նման բաներ կը հրամանեն:-

Ծառայութեանց Package:- որ գանազան ծառայութիւններ կը պարունակեն, ինչպէս հեռախօսային, քէյպըլ, text messaging եւ ինթերնէթ: Այս առնելը լաւ է եթէ բոլոր այս ծառայութեանց պէտք ունիս: Եթէ ոչ՝ աւելի լաւ է միայն ուզածդ առնել:

Պարզ ծառայութիւն: Երկու տեսակի են:-

- **Landline** հեռախօսի ընկերութիւնները կու տան հետեւեալները.-
  - a) Տեղական անսահման ռոպէներ ամսական ճշդուած գումարի փոխարէն .

Ճշդուած ռոպէներ աժան գինով, բայց յաւելեալ պիտի վճարես ռոպէներու քանակը անցնելէ ետք: Այս ծրագիրը լաւ է եթէ շատ չես զանգեր .

- Wireless

Շատ մը ընկերութիւններ կը տրամադրեն ծրագրեր ուր կանխիկ կը վճարէք ռոպէներու համար եւ երբ ռոպէները վերջանան նորերը կը գնէք: Այս պարագաներ



## Հեռախօսի Ամսավճարիդ վճառումը

Ամսավճարդ վճարէ ատենին: Եթէ ուշ ես կրնաս՝ ուշացման տուգանքի ենթակա ըլլալ կամ ալ հեռաձայնի գիծը կրնայ անջատուիլ: Կրնաս միայն ամսական տարրական ծախսը վճարել որպէսզի գիծդ չանջատուի:

## Անհամաձայնութիւններ

Եթէ անհամաձայն էք որեւէ ծախսի, անմիջապէս իմացուցէք ընկերութեան: Ձեր փաստաթերթերը պահեցէք երբ կը հեռաձայնէք իրենց, անունը արձանագրէք այն անձին որու հետ խօսեցաք, եւ խօսակցութեան հիմքը գրէք: Եթէ ընկերութիւնը ձեր անհամաձայն գտած ծախսը չի շտկէ, դուք կրնաք զանգատ ներկայացնել California Public Utilities Commission-ի հետ: Տեսնել այս գրքոյկի ետեւը յաւելեալ մանրամասնութեանց համար: